ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ՕՍԻՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.8 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՒՐԵՆ ՕՍԻՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Օսիպյանը ծնվել է 1930 թվականին, Ադրբեջանի Նուխի քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1947 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1952 թվականին գերազանցությամբ ավարտելուց հետո՝ նույն տարում, ընդունվել է հիշյալ ֆակուլտետի ասպիրանտուրա՝ պետական իրավունքի մասնագիտացմամբ:

1949-1953 թվականներին, ուսմանը զուգահեռ, որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Երևանի Մ. Նալբանդյանի անվան դպրոցում:

1959 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, դարձել իրավաբանական գիտությունների թեկնածու:

1960 թվականին ստացել է դոցենտի, իսկ 1998 թվականին՝ պրոֆեսորի կոչում:

1953-1971 թվականներին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում դասավանդել է «Սովետական պետական իրավունք», «Քաղաքացիական իրավունք» և «Քաղաքական ուսմունքների պատմություն» առարկաները:

1964 թվականին Բուդապեշտում մասնակցել է դեմոկրատ իրավաբանների միջազգային ասոցիացիայի կոնգրեսի աշխատանքներին:

1965 թվականից եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետական և վարչական իրավունքի ամբիոնի վարիչը, իսկ 1967-1971 թվականներին՝ նույն ֆակուլտետի դեկանը:

1971-1988 թվականներին եղել է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) դատախազը: Իր պաշտոնավարման ընթացքում Ս. Օսիպյանը ՀՊՍՀ դատախազության համակարգում կատարել է դատախազական գործունեության արդյունավետությունն ապահովելուն ուղղված կառուցվածքային փոփոխություններ:

1993 թվականից նա աշխատել է ՌԴ գլխավոր դատախազության օրինականության և իրավակարգի ամրապնդման գիտահետազոտական ինստիտուտում, որը հիմնադրվել է դեռևս 1963 թվականին:

ՌԴ գլխավոր դատախազության օրինականության և իրավակարգի ամրապնդման գիտահետազոտական ինստիտուտի գիտական խորհրդի կողմից Ս. Օսիպյանին շնորհվել է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և սահմանադրական իրավունքի պրոֆեսորի կոչում: Նրա գրչին են պատկանում 9 մենագրություն և ավելի քան 80 գիտական աշխատանք՝ նվիրված պետական և վարչական իրավունքի, քաղաքական ուսմունքների պատմության, դատախազական հսկողության և այլ ոլորտների հիմնախնդիրներին:

Ս. Օսիպյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի կոչում, պարգևատրվել է «Աշխատանքի արիության» մեդալով և այլ շքանշաններով ու պատվոգրերով:

Ս. Օսիպյանը մահացել է 2019 թվականի մարտի 24-ին:

Ս. Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է նրա որդու՝ Վիկտոր

Տեր-Հովսեփյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ